ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 ապրիլի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

41
(3250)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԲՌՆԱԳԱՆՁԵԼ 20 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԵՎ 1 ՄԼՐԴ ԴՐԱՄ

Դատախազությունը պահանջում է ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի եղբորից եւ երկու փեսաներից բռնագանձել 2 տասնյակը գերազանցող անշարժ գույք, 1 միլիարդ դրամը գերազանցող գումար: Այս մասին հայտնում են ՀՀ գլխավոր դատախազությունից՝ հիշեցնելով, որ գլխավոր դատախազությունը 2023 թվականի մարտի 6-ին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ պահանջելով Հովիկ Աբրահամյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 59 անշարժ գույք, որոնցից 15-ը գտնվում է Երեւանում,
- 4 տրանսպորտային միջոց,
- 20 իրավաբանական անձանցում մասնակցություն,
- շուկայականից էականորեն ցածր արժեքով օտարված 9 գույքերի շուկայական արժեքը՝ 1 միլիարդ 628 միլիոն 277 հազար դրամի չափով,
- 8 ընկերություններին տրված փոխառություններից ծագող պահանջի իրավունք՝ 11 միլիոն 292 հազար 570 ԱՄՆ դոլարի չափով, 687 միլիոն դրամի չափով եւ 3 միլիոն 117 հազար եվրոյի չափով,
- Եւս 21 միլիարդ 202 միլիոն դրամ:

Հիշեցնենք նաեւ, որ 2025 թվականին դատախազն իրավասու դատարան է հանձնել ՀՀ նախկին վարչապետի եւ բարձրաստիճան այլ պաշտոններ զբաղեցրած Հովիկ Աբրահամյանի վերաբերյալ քրեական վարույթը:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հայտնել է, որ իրենք զբաղվում են Սուրբ Աննա եկեղեցում տեղի ունեցած միջադեպի մասով: Այդ միջադեպի արդյունքում կալանավորված Դավիթ Մինասյանի գործով վերջին օրերին մի շարք օգտատերեր գրառումներ են կատարում եւ նշում Մարդու իրավունքների պաշտպանի ֆեյսբուքյան էջը: Ընդ որում, որոշ օգտատերեր, ծանոթ չլինելով Մարդու իրավունքների պաշտպանի լիազորություններին, մի քանի օր շարունակ կատարում են գրառումներ ՄԻՊ հաստատության գործունեության վերաբերյալ՝ փորձելով փաստացի արատավորող տեղեկություններ տարածել կառույցի իրականացրած գործունեության առնչությամբ: Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու ընթացակարգը սահմանված է օրենքով, ըստ որի՝ Պաշտպանին կարելի է դիմել փոստի, Պաշտպանին կամ նրա ներկայացուցչին անձամբ բողոք հանձնելու միջոցով: Ուստի, սոցիալական հարթակներում կատարված գրառումների միջոցով չէ, որ Մարդու իրավունքների պաշտպանը սկսում է բողոքի քննարկման ընթացակարգեր: Դավիթ Մինասյանի իրավունքներին առնչվող հարցի ուսումնասիրությունը սկսվել է ոչ թե որեւէ դիմումի, այլ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի սեփական նախաձեռնությամբ: Ընդ որում՝ հարցի ուսումնասիրությունն ու վերջինիս առնչությամբ լիազորությունների գործադրումը սկսվել են միջադեպից հետո անհապաղ:

«Հայ Ազգային Կոնգրեսը բոլոր անհրաժեշտ ջանքերը գործադրեց Սամվել Կարապետյանի ղեկավարած «Ուժեղ Հայաստանի» հետ գալիք ընտրություններում ազգակործան ռեժիմի դեմ մեծ դաշինք ստեղծելու նպատակով: Դրսեւորել ենք առավելագույն ճկունություն, դաշինքի ստեղծման համար որեւէ նախապայման չդնելով: Մեզանից անկախ պատճառներով, այդ դաշինքը չկայացավ: Հայ Ազգային Կոնգրեսը, հետեւաբար, կմասնակցի ընտրություններին առանձին՝ միեւնույն ժամանակ պատրաստ լինելով համագործակցել ինչպես «Ուժեղ Հայաստանի», այնպես էլ քաղաքական այլ ընդդիմադիր ուժերի հետ եւ ընտրական ժամանակաշրջանում, եւ ընտրություններից հետո խորհրդարանում կոալիցիա կազմելու եւ երկիրը վերահաս սպառնալիքներից փրկելու գործում»:

Երգիչ-դերասան Հայկ Դուրգարյանի վերաբերյալ թմրանյութի գործով դատարանը որոշում է կայացրել: 2026 թվականի փետրվարի 19-ին Հայկ Գեւորգի Դուրգարյանի պաշտպան էդ. Աղաջանյանի միջնորդությունը բավարարվել է, եւ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց բացակայելու արգելքը վերացվել է: Հիշեցնենք, որ Հայկ Դուրգարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինի՝ խախտելով «Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270Ն որոշման պահանջները, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների եւ հոգեմետ հոգեներգործուն նյութերի շրջանառություն իրականացնելու, այսինքն՝ թմրամիջոց պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու թույլտվություն, քննությամբ չպարզված հանգամանքներում առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք է բերել եւ իր մոտ ապօրինի պահել է առանձնապես խոշոր չափերի՝ 3.83 գրամ քաշով թմրամիջոց:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՆՄԱՆ Է ՎԱԽԻ ՄԹՆՈԼՈՐՏ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՓՈՐՁԻ»

ArmLur.am-ը զրուցել է Հայաստանի Հանրապետության «Համահայկական ճակատ» կուսակցության խորհրդի անդամ Նախիրա Գեւորգյանի հետ:

- Տիկին Գեւորգյան, կխնդրեմ անդրադառնանք վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձություններին: Պարբերաբար ՔՊ ներկայացուցիչները հայտնվում են սկանդալային իրավիճակներում՝ լինի դա Ալեն Սիմոնյանի, թե Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ միջադեպ: Ինչի՞ մասին է սա խոսում, ինչո՞ւ են ՔՊ-ականները անընդհատ հայտնվում նման իրավիճակներում:

- Իմ կարծիքով՝սա խոսում է այն մասին, որ նրանք հայտնվել են ցայտնոտային վիճակում: Արդեն զգում են, որ ժողովրդի աջակցությունը նվազել է, եւ որքան էլ փորձեն քարոզարշավներով, խոստումներով կամ արտաքին ցուցադրական քայլերով իրավիճակ փոխել, հասկանում են, որ իրենց վարկանիշը լուրջ անկում է ապրել: Մեր առաջնորդն էլ մի քանի օր առաջ ընդգծեց, որ վարչապետին զեկուցվել է՝ նույնիսկ 18 տոկոս ձայն հավաքել չի հաջողվելու: Այս ամենը նրանց մոտ առաջացրել է լարվածություն եւ նյարդային պահվածք:

- Դուք նաեւ անդրադարձաք զոհված եւ անհետ կորած զինվորների ծնողների մասնակցությամբ միջադեպին: Ի՞նչ տեղի ունեցավ:

- Այո՛, սա ամենացավոտ թեմաներից մեկն է: Խոսքը վերաբերում է զոհված եւ անհետ կորած զինվորների ծնողներին: Երբ մեր կուսակցության նախագահին՝ պահեստազորի սպային, բերման ենթարկեցին, մենք ուղիղ եթերով կոչ արեցինք ընդդիմադիր ուժերին միանալ Արաբկիրի ոստիկանության դիմաց անցկացվող հավաքին: Սակայն, ցավոք, ընդդիմադիրներից գրեթե ոչ ոք չմիացավ: Մեզ միացան

միայն ծնողները եւ մի քանի կուսակցության անդամներ: Սա շատ մտահոգիչ էր, հատկապես այն ֆոնին, երբ նույն ընդդիմադիր շրջանակներից հաճախ խոսվում է բանակի, սահմանների եւ ազգային անվտանգության մասին:

- Անցնենք Ալեն Սիմոնյանի հետ կապված միջադեպին: Ինչպե՞ս եք գնահատում նրա վարքագիծը:

- Ես գտնում եմ, որ նման վարքագիծը չի վայելում Ազգային Ժողովի նախագահին: Եթե նա լիներ իր պաշտոնին համապատասխան կոմպետենտ եւ զուսպ, նման կերպ չէր արձագանքի, չէր հայհոյի եւ նման ժեստերով չէր խոսի մարդկանց հետ: Պաշտոնը պարտավորեցնում է: Այո՛, որպես շարքային քաղաքացի՝ գուցե մարդը կարող է էմոցիոնալ արձագանք տալ, բայց երբ խոսքը երկրի բարձրաստիճան պաշտոնյայի մասին է, չափանիշներն այլ են:

- Սակայն տեսանյութում երեւում է, որ նախ նրան են վիրավորել, եւ նա պատասխանել է նույն կերպ: Դա արդյոք չի արդարացնում նրա արձագանքը:

- Որպես պաշտոնյա՝ ոչ: Պաշտոնյան պարտավոր է տարբերակել անձնական զգացմունքներն ու պետական պատասխանատվությունը: Եթե ինքը իսկապես ցանկանում էր հարթել իրավիճակը, կարող էր իջնել, խոսել մարդկանց հետ, հատկապես ծնողների հետ, լսել նրանց դժգոհությունները: Փոխարենը ստացվեց փողոցային մակարդակի խոսակցություն, ինչը միայն խորացրեց լարվածությունը:

- Նիկոլ Փաշինյանն էլ նշել էր, որ վիրավորանքին այլեւս չեն պատասխանելու վիրավորանքով: Ինչպե՞ս եք մեկնաբանում սա:

- Եթե իրապես այդպես է, ապա պետք է դա դրսեւորվի նաեւ գործնականում: Բայց մենք տեսնում ենք հակառակը՝մարդկանց բերման են ենթարկում, կալանավորում են, անգամ երիտասարդների նկատմամբ խիստ միջոցներ են կիրառում: Սա արդեն ավելի շատ նման է վախի մթնոլորտ ստեղծելու փորձի, որպեսզի մարդիկ չհամարձակվեն բարձրաձայնել իրենց դժգոհությունը:

- Ի՞նչ ակնկալիքներ ունեք Ալեն Սիմոնյանից այս իրավիճակը հարթելու համար:

- Ըստ իմ տեղեկությունների՝ նույնիսկ իշխանական շրջանակներում այս թեմային բավականին բացասական են վերաբերվել: Կարծում եմ՝ այս հարցը պետք է լուծվի իրավական դաշտում: Եթե անհրաժեշտ լինի, կդիմենք դատարան: Պետք է հստակ հասկանան, որ ոչ ոք անձեռնմխելի չէ, եւ պաշտոնը չի նշանակում, որ կարելի է անել ամեն ինչ առանց պատասխանատվության:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԱՌԱՋԱՐԿ

Պատգամավոր Հայկ Սարգսյանը փոփոխություններ եւ լրացումներ է առաջարկում «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին», «Պետական տուրքի մասին» օրենքներում եւ Քրեական օրենսգրքում:

Պատգամավորն անդրադարձել է ժամկետային զինծառայողների թվի նվազմանը, ներկայացրել վիճակագրական տվյալներ, այս համատեքստում խոսել քաղաքացիությունից հրաժարվելու միտումների եւ դրա դեմ պայքարի մեխանիզմների կիրառման մասին: Հայկ Սարգսյանը մանրամասնել է զինծառայության ոլորտում իր ձեռնարկած քայլերը, խոսել Կառավարության հետ իրականացրած համատեղ աշխատանքում առաջացած խնդիրների մասին:

Պատգամավորը զինվորների թվաքանակն ավելացնելու համար առաջարկում է ծառայության սահմանային տարիքը բարձրացնել, ծառայությունից խուսափելու համար բժշկական փորձաքննությունից հրաժարվելը քրեականացնել, ծառայությունից խուսափած անձանց տալ կարճաժամկետ ծառայության հնարավորություն մեծ գումարի դիմաց, ինչն արդեն սահմանվել է 27 տարին լրացածների համար, քաղաքացիությունից հրաժարվելու համար բարձր վճար սահմանել:

Ըստ Հայկ Սարգսյանի՝ այս քայլերի դեպքում կհաջողվի ավելացնել զորակոչի թիվը, ինչը հնարավորություն կտա կրճատելու ծառայության ժամկետը 6 ամսով, եւ հավաքագրված գումարը տրամադրելու ամբողջ ժամկետով ծառայող զինծառայողներին: Պատգամավորի խոսքով ծառայության ժամկետի կրճատումը չի եղել առաջնային նպատակ, դա հավելյալ արդյունք է ապահովելու:

Պատգամավորների հետ հարցուպատասխանի ձեւաչափում Հայկ Սարգսյանը պարզաբանումներ է ներկայացրել իր ներկայացրած օրենսդրական փաթեթի քննարկման փուլերի եւ մի շարք դրույթների մասին:

Հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը տեղեկացրել է, որ Ազգային Ժողովի աշխատակազմի փորձագիտական եւ վերլուծական վարչությունը ներկայացրել է ծավալուն եզրակացություն, որտեղ նշվում է մի շարք դրույթների հակասահմանադրական լինելը:

Հարակից զեկույցում հանձնաժողովի անդամ Արտյոմ Մեհրաբյանը մտահոգիչ է համարել ԱԺ աշխատակազմի փորձագիտական եւ վերլուծական վարչության եզրակացությունը, նշել, որ դեմ է օրենսդրական փաթեթին, այն պետք է վերանայվի:

Պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանը տեղեկացրել է, որ գործադիրը նպատակահարմար չի գտնում քննարկվող հարցի ընդունումը եւ առաջարկել է ձեռնպահ մնալ այս նախաձեռնությանը դրական եզրակացություն տալուց: Նա հավելել է, որ ծառայության ժամկետի կրճատումը Կառավարության 2021-2026 թվականների ծրագրում ներառված է եղել:

Ի պատասխան Հայկ Սարգսյանի ներկայացրած մտահոգիչ վիճակագրական տվյալների՝ փոխնախարարը նշել է, որ իրականացված փոփոխությունների արդյունքում 2022-2026 թվականներն ընկած ժամանակահատվածում զորակոչվածների թիվը 2022 թվականի զորակոչի համեմատ աճել է 25 տոկոսով:

Արման Սարգսյանի համոզմամբ նման կարգավորմամբ խնդիրը չի լուծվի, ընդամենը գումարով ազատվողների թիվը կավելանա եւ բյուջեում գումարը: «3000 մարդ, պայմանական, եթե օգտվի գումարի դիմաց բանակից ազատվելու հնարավորությունից, դա չի նշանակում, որ 3000-ով կավելանա մեր զորակոչը»,- նշել է փոխնախարարը:

Առաջին անգամ Հայկ Սարգսյանի կողմից այս նախաձեռնությունը ներկայացվել էր 2025 թվականի մայիսին, որից հետո տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ, այդ թվում՝ օրենսդրական. ծառայության ժամկետը 24 ամսվա փոխարեն սահմանվել է 18 ամիս, «Պաշտպան հայրենյաց» ծրագրով պայմանագրային զինծառայություն անցածների թիվը հատել է 5300-ը, ինչը դրական ցուցանիշ է, կատարվել է նաեւ փոփոխություն 404 որոշման մեջ եւ լավարկվում է օրենսդրությունը:

«Հայաստան» խմբակցությունից Գեղամ Մանուկյանն անընդունելի է համարել գումարով պայմանավորված տարբերակում դնել զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայության հարցում, փաթեթը հակասում է Սահմանադրությանը: Նման կարգավորումը, ըստ պատգամավորի, նաեւ հասարակական պառակտման պատճառ է դառնալու:

Քվեարկության արդյունքում հարցն արժանացել է հանձնաժողովի բացասական եզրակացությանը:

ԱՆԵԼԻՔ ՈՒՆԵՐ, ՈՐԸ ՉԱՐԵՑ

Հայաստանի Ազգային Ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը չի բացառում, որ ապագայում կարող է քննարկվել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից Հայաստանի դուրս գալու հարցը՝ ընդգծելով, որ այդ որոշումը կախված կլինի երկրի շահերից:

Armenpress-ի հաղորդմամբ՝ անդրադառնալով լրագրողի հարցին՝ հնարավո՞ր է, որ Հայաստանը որոշի դուրս գալ ՀԱՊԿ-ից, Քոչարյանը պատասխանեց. «Երբեք մի ասա երբեք: Աշխարհը շատ անհանգիստ է: Մեր երկրի անվտանգությունը, երկրի շահը պետք է թելադրեն մեր քայլերի հաջորդականությունը»: Նա ընդգծեց, որ Հայաստանի համար ՀԱՊԿ-ի հետ կապված հիմնական խնդիրն առնչվում էր ոչ թե Լեռնային Ղարաբաղին, այլ Հայաստանի սահմաններին:

«ՀԱՊԿ-ի գործողությունները փորձ էր արվում կապել Լեռնային Ղարաբաղի վիճակի հետ, բայց Հայաստանի սահմանների հետ կապված ՀԱՊԿ-ը անելիք ուներ: Չարեց, չէ՞: Մեր խնդիրն առաջացել է Հայաստանի սահմաններին տիրող իրավիճակի հետ, եւ մենք երկու թե երեք անգամ դիմել ենք ՀԱՊԿ-ի աջակցությանը: Այդ աջակցությունը, բացի բանավոր խոսքից, որեւէ արդյունք մեզ համար չի տվել»,- ասաց Քոչարյանը: Նա հավելեց, որ հետագա որոշումները կախված կլինեն բացառապես Հայաստանի պետական շահերից. «Ինչ մեր երկրի շահը կթելադրի, այդպես էլ կշարժվենք»:

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ

Ապրիլի 9-ին տեղի է ունենալու «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համագումարը եւ «Առաջարկ Հայաստանին» ծրագրի եւ թիմի շնորհանդեսը: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է ԲՀԿ աշխատակազմի ղեկավար Իվետա Տոնոյանը: «Առաջիկա խորհրդարանական ընտրությունների «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական շտաբը ղեկավարելու է Հրաչյա Ռոստոմյանը: Մարզային գրասենյակների հետ աշխատանքը կանոնակարգելու է ԲՀԿ քաղխորհրդի անդամ Արմեն Մանուկյանը, իսկ Երեւան քաղաքի կառույցների աշխատանքը համակարգելու է Երեւանի քաղաքապետարանի «Մայր Հայաստան» խմբակցության ավագանու անդամ Գեւորգ Ստեփանյանը:

Հանրության հետ կապերի, ՋԼՄ-ների հետ աշխատանքը համակարգելու եմ ես՝ Իվետա Տոնոյանս: Մեր շփումը քաղաքացիների եւ ՋԼՄ-ների ներկայացուցիչների հետ լինելու է բաց, թափանցիկ եւ մշտական:

Թիմում եւ շտաբային աշխատանքներում ներգրավված են լինելու տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, անկուսակցական անձինք, տարբեր ոլորտների հեղինակավոր մասնագետներ, հանրային գործիչներ:

Միասին մուտք ենք գործում անչափ պատասխանատու փուլ՝ վստահ լինելով, որ համակարգված աշխատանքը, հստակ տեսլականը եւ ուժեղ թիմը կարող են բերել Հայաստանի համար իրական փոփոխություններ»,- գրել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ

Երեկ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՍԴ դատավոր Արտակ Զեյնալյանի հարազատներից Կարեն Զեյնալյանը, սպանված Սարգիս Զեյնալյանի քեռին ու եւս մեկ անձ կալանավորվել են Չարենցավանի դատարանում ծեծկռտուք կազմակերպելու քրեական վարույթի շրջանակներում:

ArmLur.am-ը գրել էր, որ ՍԴ դատավոր Արտակ Զեյնալյանի հարազատները՝ մոտ 29 անձ, ձերբակալվել էին Չարենցավանի դատարանում խառնաշփոթ իրավիճակ, ծեծկռտուք կազմակերպելու դեպքով: ՍԴ դատավոր Արտակ Զեյնալյանի հորեղբոր թոռան՝ Սարգիս Զեյնալյանի սպանության գործով դատական նիստի ընթացքում տուժողների հարազատների եւ մեղադրյալների միջեւ վիճաբանություն էր սկսվել, որը վերածվել էր ծեծկռտուքի: Դրա հետեւանքով վիրավորվել էին նաեւ դատական կարգադրիչները:

Կարգադրիչներից մեկը գլխի հատվածում վնասվածք էր ստացել: ՀՀ քննչական կոմիտեից հայտնել էին, որ դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն) եւ 167-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով (մի խումբ անձանց կողմից առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը): Արդյունքում, 3 անձ, որոնց մեջ են ՍԴ դատավոր Արտակ Զեյնալյանի հարազատները, կալանավորվել են:

ԾՐԱԳԻՐ ԵՆ ՄՇԱԿԵԼ

Axios-ը, հղում անելով իրավիճակին ծանոթ չորս ամերիկյան, իսրայելական եւ մերձավորարեւելյան աղբյուրների, պնդում է, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելը արդեն պատրաստել են իրանական էներգետիկ օբյեկտների լայնածավալ ռմբակոծման ծրագիր: «ԱՄՆ-Իսրայելական արշավի շրջանակներում իրանական էներգետիկ օբյեկտների լայնածավալ ռմբակոծման գործառնական ծրագիրն արդեն պատրաստ է մեկնարկի», - գրում է պորտալը:

Ավելի վաղ Թրամփը հայտարարել էր, որ Վաշինգտոնն ու Թեհրանը կարող են համաձայնության գալ երկուշաբթի օրը: Կիրակի օրը Թրամփը Axios-ին ասել էր, որ ԱՄՆ-ն «խորը բանակցություններ» է վարում Իրանի հետ, եւ որ համաձայնության կարելի է հասնել արդեն երեքշաբթի օրը:

Ավելին, ամերիկացի առաջնորդը նախկինում սպառնացել էր երեքշաբթի օրը ոչնչացնել էլեկտրակայաններն ու կամուրջները եւ պահանջել էր բացել Հորմուզի նեղուցը:

ՅՈԹ ԵՐԵԽԱ Է ՋՈՀՎԵԼ

ԱՄՆ-ի կողմից Թեհրանին հասցված ավիահարվածների հետեւանքով զոհերի թիվը հասել է յոթի, հայտնել է Իրանի առողջապահության նախարարության խոսնակ Հոսեյն Քերմանպուրը:

«Երեկ երեկոյան ամերիկյան ինքնաթիռները հարվածեցին Թեհրանին, որի հետեւանքով զոհվեցին տասը տարեկանից փոքր յոթ երեխաներ, որոնցից մեկը նույնիսկ մեկ տարեկան չէր», - գրել է Քերմանպուրը սոցիալական ցանցերում:

ՄԻՆՉԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՈՒՐՔԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԲԱՑՎԵԼ

Գերմանական Deutsche Welle պարբերականը հոդված է հրապարակել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման եւ սահմանների հնարավոր բացման վերաբերյալ՝ ընդգծելով, որ գործընթացը կարող է ունենալ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական լուրջ հետեւանքներ:

Հոդվածում նշվում է, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի 2025 թվականի հանդիպումը պատմական էր՝ առաջին անգամ հայկական կողմի նման մակարդակի ներկայացուցիչը այցելել էր Թուրքիա:

Չնայած երկու երկրների միջեւ շուրջ 330 կմ երկարությամբ ցամաքային սահմանին՝ այն փակ է 1993 թվականից՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության ֆոնին: Թուրքիան այդ ժամանակ փակել էր սահմանը՝ աջակցելով Ադրբեջանին:

Պարբերականի տվյալներով՝ 2022 թվականից սկսվել է հարաբերությունների զգուշավոր կարգավորման գործընթաց, իսկ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կնքված խաղաղության համաձայնագիրը նոր հնարավորություններ է ստեղծել տարածաշրջանի համար:

Նշվում է, որ Թուրքիայի Իգդիր եւ Կարս նահանգներում գտնվող անցակետերը՝ Ալիջանը եւ Ակյականը, կարող են վերաբացվել առաջիկա ամիսներին: Հայկական կողմը, ըստ լրատվամիջոցի, արդեն իրականացրել է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները, իսկ թուրքական կողմում դրանք գտնվում են ավարտական փուլում:

Ըստ հեղինակի՝ 2022 թվականից սկսած ընթանում է զգուշավոր մերձեցում: Հայաստանը այլեւս չի պնդում, որ Անկարան ճանաչի 1915 թվականի իրադարձությունները որպես ցեղասպանություն:

Նախորդ տարի Հայաստանը նաեւ խաղաղության համաձայնագիր է ստորագրել Ադրբեջանի հետ, որը վերջ է դրել Լեռնային Ղարաբաղի շուրջ տասնամյակներ տեւած պատերազմին: Այդ ժամանակից ի վեր թուրքական ընկերությունները սկսել են հույս կապել տարածաշրջանում հարաբերությունների կարգավորման եւ Հայաստանի հետ սահմանների բացման հետ, որոնք փակ են ավելի քան երեսուն տարի:

Պարբերականի դիտարկմամբ, եթե անցակետերը բացվեն մինչեւ Հայաստանի խորհրդարանական ընտրությունները, որոնք նախատեսված են հունիսին, դա մեծ հաղթանակ կլինի վարչապետ Փաշինյանի համար: Նա տարիներ շարունակ վարում է Թուրքիայի հետ հաշտեցման քաղաքականություն եւ փորձում է Հայաստանը մոտեցնել Արեւմուտքին, նշում է հեղինակը:

Հոդվածում նաեւ ընդգծվում է, որ սահմանների բացումը կարող է էականորեն խթանել առեւտուրը: Ներկայումս երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը իրականացվում է Վրաստանի միջոցով եւ կազմում է շուրջ 300-350 միլիոն դոլար: Բաց սահմանների դեպքում այն կարող է հասնել մինչեւ 1 միլիարդ դոլարի:

Բացի այդ, սպասվում է նոր լոգիստիկ ուղիների զարգացում, այդ թվում՝ էներգետիկ եւ հեռահաղորդակցության կապերի ստեղծում, որոնք կկապեն տարածաշրջանը Կովկասի եւ ավելի լայն շուկաների հետ: Միեւնույն ժամանակ, պարբերականը նշում է, որ Իրանի շուրջ զարգացումները կարող են դանդաղեցնել գործընթացը՝ անվտանգության ռիսկերով պայմանավորված:

Թուրքիայի արեւելյան նահանգները՝ Կարսը, Իգդիրը, Արդահանը եւ Վանը, գտնվում են հայկական սահմանից շատ մոտ: Դրանք նաեւ Անատոլիայի ամենաաղքատ շրջաններից են: Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի տվյալներով՝ դրանք զբաղեցնում են վերջին տեղերը քաղաքների վարկանիշում՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմելով ընդամենը 3250-ից 4350 եվրո:

Հոդվածում նշվում է, որ այս տարածաշրջանի բնակիչները մեծ հույսեր են կապում սահմանով մարդկանց եւ ապրանքների շարժի, ինչպես նաեւ Հայաստանից եւ աշխարհասփյուռ հայությունից այցելուների ժամանման հետ: Սահմանի թուրքական կողմում գտնվում են բազմաթիվ կարեւոր պատմական եւ կրոնական վայրեր, ուստի դրա բացումը կարող է ստեղծել զբոսաշրջության նոր հնարավորություններ:

Կարսի առեւտրի եւ արդյունաբերության պալատի ղեկավար Քադիր Բոզանը նույնպես ընդգծում է այսպես կոչված «Թրամփի միջանցքի» կարեւորությունը: Նրա ղեկավարած կազմակերպության անդամները այս ուղին եւ դրա ենթակառուցվածքները համարում են չափազանց կարեւոր: Այս նախագիծը դիտարկվում է որպես Չինաստանից Եվրոպա բեռնափոխադրումների արագացման կարեւոր բաղադրիչ:

Տարածաշրջանի տնտեսապես թույլ զարգացած շրջաններում, մասնավորապես Թուրքիայի արեւելքում, մեծ ակնկալիքներ կան սահմանների բացումից՝ ինչպես առեւտրի, այնպես էլ զբոսաշրջության ակտիվացման տեսանկյունից:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՁԱԽՈՂՎԵԼ Է

Իրանի «Խաթամ ալ-Անբիա» կենտրոնական շտաբի հրամանատարը հայտարարել է, որ Իրանում խոցված F-15E ինքնաթիռի օդաչուին փրկելու ԱՄՆ ձախողված առաքելության մասին: Նրա խոսքերը մեջբերել է Tasnim լրատվական գործակալությունը: «Կործանված կործանիչ օդաչուին փրկելու անհաջող փորձերը խափանվել են», - ասվում է հայտարարության մեջ: Իրանի զինված ուժերի հրամանատարը նաեւ հայտնել է ամերիկյան C-130 ինքնաթիռի եւ երկու Black Hawk ուղղաթիռների խոցման մասին Սպահանի հարավային մասում:

Երկտեղանոց F-15E կործանիչը խոցվել է Իրանի տարածքում ուրբաթ օրը: Axios-ի տվյալներով՝ անձնակազմի երկու անդամներն էլ՝ օդաչուն եւ նավիգատորը/զենքի օպերատորը, կապ են հաստատել՝ կատապուլտվելուց հետո:

Պորտալի աղբյուրները նշել են, որ օդաչուն փրկվել է ինքնաթիռի անկումից մի քանի ժամ անց: Որոնողական-փրկարարական գործողության ընթացքում Իրանը խոցել է դրան մասնակցող ամերիկյան Black Hawk ուղղաթիռներից մեկը: Անձնակազմի անդամները վիրավորվել են, բայց ինքնաթիռը կարողացել է հեռանալ:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հետագայում հաստատել է երկրորդ օդաչուի փրկության մասին լուրը: Նա հայտարարել է, որ կործանիչի զենքի օպերատորը վիրավոր է, բայց «կենդանի է եւ առողջ»:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Ազատություն». ԱՄՆ-ն, Իրանը եւ տարածաշրջանային միջնորդների խումբը քննարկում են հնարավոր 45-օրյա հրադադարի պայմանները, հաղորդում է Axios գործակալությունը՝ վկայակոչելով չորս աղբյուրների: Միջնորդները քննարկում են երկփուլ համաձայնագրի պայմանները, գրում է պարբերականը՝ հավելելով, որ առաջին փուլը կլինի 45-օրյա հրադադար, որի ընթացքում բանակցություններ կընթանան պատերազմի մշտական դադարեցման շուրջ: Երկրորդ փուլը կլինի պատերազմի դադարեցման մասին համաձայնագիրը:

ԿՐԱԿՈՂՆ ՈՒ «ԱՎՏՈՄԱՏԸ» ՉԿԱՆ

ԱՋԱՓՆՅԱԿԻ ԿՐԱԿՈՑՆԵՐԻՑ 1.5 ԱՄԻՍ ԱՆՑ

Աջափնյակի աղմկահարույց կրակոցներից անցել է 1,5 ամիս, սակայն մինչ օրս չկան ինքնաձիգը ու դրանով կրակող անձը: Վերջինիս դեռ փնտրում են:

Փետրվարի 18-ին Աջափնյակում հնչած աղմկահարույց կրակոցների գործով ուշագրավ իրավիճակ է: Ողջ իրավապահ համակարգը զարմացած է, թե ինչպես կարող է ոչինչ չասող թեմայի շուրջ այսքան երիտասարդներ փորձեն զենքով «հաշիվ մաքրել» միմյանցից: Բանն այն է, որ մասնակիցներից մեկի ընկերուհու աղջկան են մոտեցել, ու նա զգուշացրել է իր ընկերուհու աղջկանից հեռու մնալ, չմոտենալ, սակայն զգուշացումները չեն ազդել, ու բանը հասել է զինված հանդիպմանը:

Ի դեպ, աղմկահարույց տեսանյութում նկատում ենք, որ ինքնաձիգը ձեռքին տղամարդը կրակում է մյուս խմբի տղաների վրա: Դեպքից անցել է 1,5 ամիս, սակայն ինքնաձիգը ձեռքին տղամարդուն իրավապահները մինչ օրս չեն հայտնաբերել:

ArmLur.am-ին գլխավոր դատախազությունից հայտնեցին, որ 2026 թվականի փետրվարի 18-ին Աջափնյակում տեղի ունեցած դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում հանրային քրեական հետապնդում է հարուցված 20 անձի նկատմամբ: 4 անձի նկատմամբ խափանման միջոց է կիրառված կալանքը, որից երեքով հայտարարված է հետախուզում: 7 անձի նկատմամբ խափանման միջոց է կիրառված տնային կալանքը՝ համակցված այլ խափանման միջոցներով: 9 անձի նկատմամբ ընտրված են այլ խափանման միջոցներ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՄԵԾ ՔԱՆԱԿԻ ԹՄՐԱՄԻՋՈՑ

ՆԳՆ ոստիկանության պայքարը ապօրինի թմրաշրջանառության դեմ շարունակվում է հետեւողականորեն: Արմավիրի քրեական ոստիկանների վերջին բացահայտումներից երկուսը ներկայացնենք միասնական տեսաշարով:

Արմավիրի քրեական ոստիկանները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Արմավիր քաղաքի 65-ամյա բնակիչը իրացման նպատակով պահում է կանեփից պատրաստված թմրանյութ: Տեղեկությունը ստուգվեց, ձեռք բերվեցին փաստական տվյալներ, նախաձեռնվեց քրեական վարույթ:

Մարտի 16-ին, դատարանի որոշմամբ, նրա բնակության վայրում կատարված խուզարկությամբ հայտնաբերվեցին մարիխուանայի նմանվող զանգվածներով ապակյա տարաներ եւ թղթե փաթեթներ՝ ընդհանուր 270 գ քաշով: Բացի այդ, հայտնաբերվեցին կանեփի սերմեր, կաթուցիչներ եւ նռնակ: Տանտերը հայտնեց, որ նռնակը գտել է, իսկ թմրանյութն ինքն է պատրաստել անձնական օգտագործման համար:

Մարտի 18-ին էլ Արմավիրի քրեական ոստիկանները ստացան նմանատիպ տեղեկություն: Նույն օրը, ժամը 15:45-ին, Երեւան-Էջմիածին ճանապարհին ձերբակալվեցին Շահումյան գյուղի եւ Վաղարշապատ քաղաքի 64-ամյա երկու բնակիչ: Հինգ րոպե անց Երեւան-Արմավիր ճանապարհին ձերբակալվեցին Հացիկ գյուղի 52-ամյա եւ Արմավիր քաղաքի 71-ամյա բնակիչներ: Երկու մեքենաները տեղափոխվեցին պահպանվող հատուկ տարածք եւ կնիքվեցին: Առաջին մեքենայի վարորդի եւ երկրորդ մեքենայի ուղեւորի մոտ հայտնաբերվեցին դեղնականաչավուն զանգված եւ սուբուտեքսի նմանվող կես հաբ: Շահումյան գյուղի բնակիչ 64-ամյա տղամարդը խոստովանեց, որ ձերբակալվելուց առաջ 25 հազար դրամով սուբուտեքս էր իրացրել վարորդին: Պարզվեց նաեւ, որ նույն սուբուտեքսը նրան էր իրացրել Հացիկ գյուղի բնակիչ 52-ամյա տղամարդը: Դատարանի որոշմամբ խուզարկվեցին կնիքված մեքենաները. հայտնաբերվեցին ներարկիչներ, որոնցից մեկը լցված էր սուբուտեքսի նմանվող լուծույթով, մյուսում կային սպիտակ հեղուկի հետքեր: Շահումյանցու տանը եւս հայտնաբերվեց փայլաթիթեղի փաթեթ՝ կանեփանման զանգվածով: Երկու դեպքով էլ նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՀԱՅՏՆՎԵԼ Է ՁՈՐԱԿՈՒՄ

Ապրիլի 6-ին՝ ժամը 03:31-ին, Կոտայքի մարզային օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Արտաշատ-Սեւան խճուղու մոտակայքում գտնվող ռեստորանային համալիրներից մեկի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ. կա արգելափակված քաղաքացի: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական խումբը: Պարզվել է, որ «Nissan» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ հայտնվել ձորակում:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՎԵՐԱՑՆԵԼ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ

«Մենք՝ ներքոստորագրյալ հասարակական կազմակերպություններս, խստորեն դատապարտում ենք եւ մեր մտահոգությունն ենք հայտնում Դավիթ Մինասյանի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Դավիթ Մինասյանը 18 տարեկան է, դեռեւս դպրոցական:

Ծնողի ու փաստաբանների հրապարակած տեղեկությունների համաձայն՝ նա ունի առողջական խնդիրներ, այդ թվում՝ ազատազրկման հետ անհամատեղելի:

Նման պայմաններում կալանավորումը նրա նկատմամբ ընտրվել եւ կիրառվում է կամայականորեն՝ առանց բավարար հիմնավորման եւ համաչափության սկզբունքի պահպանման՝ որպես պատիժ, ինչպես նաեւ վախի մթնոլորտ տարածելով հասարակության շրջանում:

Նման պայմաններում կալանավորումը նրա նկատմամբ ընտրվել եւ կիրառվում է կամայականորեն՝ առանց բավարար հիմնավորման եւ համաչափության սկզբունքի պահպանման՝ որպես պատիժ, ինչպես նաեւ վախի մթնոլորտ տարածելով հասարակության շրջանում:

Ավելին, անազատության մեջ գտնվելու երկու օրվա ընթացքում նրա ինքնազգացողությունը վատացել է, Դավիթը կորցրել է գիտակցությունը, ունեցել շնչահեղձություն: Ներկայումս գտնվում է Նաիրի ԲԿ-ի վերակենդանացման բաժանմունքում:

Հաշվի առնելով վերոգրյալը եւ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պարտավորությունները, այդ թվում՝ ազատության իրավունքի եւ անմարդկային վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման հրամայականը, ինչպես նաեւ կրթության իրավունքի պատշաճ ապահովման անհրաժեշտությունը՝ պահանջում ենք.

ՀՀ գլխավոր դատախազից՝

Անհապաղ վերացնել Դավիթ Մինասյանի խափանման միջոց կալանավորումը:

ՀՀ քննչական կոմիտեից եւ դատախազությունից՝

-իրականացնել Սուրբ Աննա Եկեղեցում տեղի ունեցած միջադեպի անկախ, անաչառ քննություն՝ երաշխավորելով վարույթում ներգրավված բոլոր անձանց իրավունքները, ինչպես նաեւ

-իրականացնել միջադեպի բազմակողմանի քննություն՝ պարզելով միջադեպի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ Դավիթ Մինասյանի ենթադրյալ արարքին նախորդող հանգամանքներն ու պատճառները, ինչպես նաեւ քրեահրավական գնահատական տալով վարչապետ Փաշինյանի անվտանգությունն ապահովող ՊՊԾ ծառայողի կողմից Դավիթ Մինասյանի նկատմամբ ֆիզիկական ներգործության դրվագին,

Հանրային պաշտոն զբաղեցնող բոլոր անձանցից՝ ձեռնպահ մնալ Դավիթ Մինասյանի անմեղության կանխավարկածը խախտող, վիրավորական եւ արժանապատվությունը ոտնահարող հանրային խոսքից:

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

Արդարության նոր մշակույթ ՀԿ

«Հելսինկյան ասոցիացիա» ԻՀԿ

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ

Լրագրողներ Հանուն Մարդու Իրավունքների ՀԿ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ

Երեւանի մամուլի ակումբ

Հանրային լրագրության ակումբ

«ԳորիսԼԱԲ» համայնքային զարգացման կենտրոն ՀԿ

Դիգնիթի ՀԿ»

ՀԱԲՎԱԾՆԵՐ ԵՆ ՀԱՍՑՐԵԼ 13-ԱՄՅԱ ՏՂԱՅԻՆ

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ ապրիլի 2-ին վիճաբանություն եւ ծեծկռտուք է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 10:55-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մասիսի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Մասիս քաղաքի 3-րդ դպրոցի 9 Բ դասարանի աշակերտներ՝ Հ.-ն, Ա.-ն եւ 8 Ա դասարանի Ա.-ն վիճաբանել են նույն դպրոցի 8 Գ դասարանի աշակերտ՝ 13-ամյա Կ. Ա.-ի հետ եւ նշված դպրոցի հետնամասում ձեռքերով եւ ոտքերով հարվածներ են հասցրել վերջինիս՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողների կողմից ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Հ.-ն հանդիսանում է Արարատի մարզի բնակիչ 14-ամյա Հ. Փ.-ն, Ա.-ն հանդիսանում է Արարատի մարզի բնակիչ 14-ամյա Ա. Պ.-ն, իսկ Ա.-ն հանդիսանում է Արարատի մարզի բնակիչ 13-ամյա Ա. Պ.-ն եւ ապրիլի 1-ին մանկավարժի կողմից դիտողություն անելու եւ դիտողությունը չընդունելու հարցի շուրջ ժամը 15:00-ի սահմաններում նշված դպրոցի հետնամասում Հ. Փ.-ն, Ա. Պ.-ն եւ Ա. Պ.-ն ձեռքերով եւ ոտքերով հարվածներ են հասցրել Կ. Ա.-ին եւ պատճառել մարմնական վնասվածք:

Դեպքի փաստով ոստիկանության Մասիսի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժին:

● *Ապրիլի 2-ից 3-ը հանրապետությունում գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 6 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՆԱԽ ՍՈՎՈՐԻՐ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Գրեթե ամեն տարի Դիլիջանի ազգային պարկի անտառներում հրդեհներ են լինում, որոնց մարումը երկար է տեւում՝ թեք տեղանքի, հրդեհների տարածքի մեծ ընդգրկվածության եւ այլ պատճառներով: Դիլիջան համայնքի բնակիչների մի մասը կարծում է, որ այդ հրդեհները մարդածին են, ազգային պարկի տարածքում ապօրինի, մեծածավալ ծառահատումների հետքերը թաքցնելու, անօրինական հատված ծառերը որպես կրակի հետեւանքով ոչնչացած ներկայացնելու համար հրդեհներ են իրականացվում: Սակայն Դիլիջանի ազգային պարկի անտառները միտումնավոր հրդեհած անձինք այդպես էլ չեն բացահայտվում, նրանք անպատիժ են մնում:

Մարտի 30-ին Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, հիմք ընդունելով, որ 2026թ. ապրիլի 21-ին իր ղեկավարությամբ Դիլիջան համայնքում անց է կացվելու շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը խոշոր անտառային հրդեհների դեպքում» թեմայով, որոշել է շտաբային ուսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել Դիլիջան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արման Բազինյանին, ուսումնավարժությանը ներգրավել համայնքային կազմավորումների հրամանատարներին, Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմին, ուսումնավարժության ղեկավարի տեղակալ Ա. Բազինյանին հանձնարարել է կազմակերպել ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը եւ հաստատումը՝ համագործակցելով ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության հետ, կազմակերպել ուսումնավարժությանը մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի, ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2026թ. ապրիլի 20-ին: Դավիթ Սարգսյանը շտաբային ուսումնավարժության մասնակիցներին հանձնարարել է ուսումնասիրել շտաբային ուսումնավարժության անցկացման համապատասխան փաստաթղթերը, պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին, սույն որոշումը հայտարարել ըստ առնչության: Ուշագրավ է, որ Դիլիջան համայնքի ղեկավարն իր ընդունած որոշման կատարման հսկողությունը վերապահել է հենց իրեն: Դ. Սարգսյանն անտառային խոշոր հրդեհների վերաբերյալ շտաբային ուսումնավարժություն անցկացնելուց առաջ նախ ինքը պետք է ուսումնասիրի հակահրդեհային անվտանգության կանոնները, որպեսզի ինքը չխախտի դրանք: 2025թ. նոյեմբերի 26-ի գիշերը Դ.Սարգսյանը, ուղիղ եթեր մտնելով Դիլիջանի ազգային պարկում խոշոր հրդեհի վայրից, ծխախոտը ձեռքին՝ներկայացնում էր հրդեհի վայրում տիրող իրավիճակը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՀՀԿ-Ն ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայաստանի հանրապետական կուսակցության 18-րդ համագումարի բանաձեւը.

«Մենք՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության 18-րդ համագումարի պատվիրակներս՝

1. Վերահաստատում ենք ՀՀԿ հիմնադրման 35-ամյակի առիթով ՀՀԿ խորհրդի կողմից ընդունված ուղերձում ամրագրված նպատակները, գերակայությունները, գնահատականներն ու ուղենիշները:

2. Արժանին մատուցելով եւ երախտագիտությամբ խոնարհվելով Հայրենիքի պաշտպանության համար զոհված նահատակների հիշատակի առջեւ՝ ընդգծում ենք, որ նրանց զոհաբերությունը մեզ պարտավորեցնում է շարունակել պետականության, ազգային անվտանգության ու արժանապատվության պաշտպանության սրբազան գործը:

3. Համոզվածությամբ հայտարարում ենք, որ 2020 թվականի 44-օրյա աղետալի պատերազմը պատահականություն չէր, այլ ՀՀ գործող կառավարիչների՝հակապետական եւ արկածախնդիր կառավարման, արտաքին վտանգների եւ սպառնալիքների թերագնահատման, «խաղաղություն ամեն գնով» կեղծ օրակարգի առաջմղման, բանակցային դիրքերի հետեւողական թուլացման ու պետական բարձր մակարդակով անպատասխանատու քաղաքականություն վարելու անխուսափելի հետեւանք:

4. Փաստում ենք, որ ՀՀ իշխանությունը բռնազավթածների «խաղաղության դարաշրջանի» քաղաքական դոկտրինը ոչ միայն չապահովեց անվտանգություն եւ կայունություն, այլեւ հանգեցրեց Արցախի շրջափակմանը, հումանիտար աղետին, 2023 թվականի սեպտեմբերյան ռազմական ագրեսիային, արցախահայության՝ իր բնօրրանից էթնիկ զտմանը եւ բռնագաղթին:

5. Մերժում ենք ՀՀ կառավարիչների եւ նրանց արտաքին պատվիրատուների այն կեղծ թեզը, թե Արցախի հարցը փակված է, եւ պահանջում ենք ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում ամրագրել արցախահայության արժանապատիվ եւ միջազգային երաշխիքներով անվտանգ վերադարձի իրավունքը, ինչպես նաեւ պատերազմի հետեւանքով անհայտ կորածների խնդրով հետեւողական աշխատանքի անհրաժեշտությունը, Բաքվի բանտերում ապօրինաբար պահվող՝գերեվարված, պատանդառված մեր հայրենակիցների շուտափույթ ազատ արձակման ու Հայրենիք վերադարձի հարցերը՝որպես համազգային եւ միջազգային օրակարգի անբաժանելի բաղադրիչ:

6. Ամրագրում ենք, որ ՀՀ գործող կառավարիչների քաղաքականությունն ուղեկցվել է Սահմանադրության, իրավական եւ բարոյական նորմերի կոպտագույն խախտումներով, պետական շահի ստորադասմամբ եւ ազգային արժեքների հետեւողական նահանջով:

7. Խոստովանում ենք, որ ընդդիմադիր ազգային ուժերը, այդ թվում՝ մենք, չկարողացանք անհրաժեշտ պահին ձեւավորել լայն համազգային շարժում եւ քաղաքական համախմբում՝ ընդդեմ ազգադավ, պետականաքանդ կառավարիչների, եւ այդ բացթողումը ենթակա է ազնիվ գնահատման ու հետեւությունների:

8. Համոզված ենք, որ սեփական սխալների ընդունումը քաղաքական թուլության նշան չէ, այլ դրանցից հետեւություններ անելով՝ ապագան կառուցելու եւ հանրային վստահությունը ամրապնդելու նախապայման:

9. Հռչակում ենք, որ մեր քաղաքական նպատակը ինքնանպատակ իշխանություն ունենալը չէ, այլ Հայաստանի ինքնիշխանության, պետականության, ազգային արժեքների ու արժանապատվության, ժողովրդի անվտանգ եւ բարեկեցիկ ապագայի պաշտպանությունը:

10. Ընդգծում ենք, որ 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին Հանրապետական կուսակցության ուղղակիորեն չմասնակցելու որոշումը հիմնավորված է եւ բխում է ոչ թե նեղ կուսակցական հաշվարկից, այլ հասարակության պառակտումը կասեցնելու, առողջ քաղաքական ուժերի համախմբման եւ հաղթանակին նպաստելու համազգային շահերից: Եվ այդ տրամաբանությամբ ընտրություններին մասնակցությունից զերծ մնալը պայքարից խուսափում չէ: Հանրապետականը շարունակելու է մնալ համազգային նպատակների համար պայքարի առաջամարտիկներից մեկը:

11. Հայտարարում ենք, որ ընտրությունների լեգիտիմությունը որոշվում է ոչ միայն քվեարկության օրով, այլեւ մինչ այդ ձեւավորված միջավայրով: Եւ այսպես շարունակվելու դեպքում գործող ռեժիմի քաղաքական հետապնդումները, բռնաճնշումները, այլակարծության հանդեպ անհանդուրժողականությունը, վարչական ռեսուրսի չարաշահումը, տեղեկատվական անհավասար պայմանների ստեղծումը, արտաքին ապօրինի միջամտությունները հիմք են տալիս հայտարարելու, որ խաթարվում է ժողովրդի ազատ կամարտահայտության իրավունքը՝ դառնալով ընտրությունները կեղծվող համարելու հիմք:

12. Վերահաստատում ենք, որ ՀՀ վարչապետին անվստահություն հայտնելու սահմանադրական ճանապարհը մեր կուսակցության համար շարունակում է մնալ իշխանափոխության հասնելու գործընթացների օրակարգում:

13.Ներկայացնում ենք մեր թիմի առաջարկությունները խորհրդարանական ընտրություններին մասնակցելու որոշում կայացրած ազգային, առողջ, իրական ընդդիմադիր ուժերին՝ իշխանափոխության գործընթացը առավել արդյունավետ եւ համակարգված դարձնելու նպատակով:

14.Համոզված ենք, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը պետք է արմատապես վերանայվի եւ վերակառուցվի՝ ինքնիշխանության, փոխշահավետության, դաշնակցային եւ գործընկերային հարաբերությունների հստակ տարբերակման եւ բացառապես պետական շահի գիտակցման հենքով:

15.Մեր պարտքն ու պարտականությունն ենք համարում քաղբանտարկյալների, Բաքվում պահվող հայ գերիների եւ պատանդների, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության, ինչպես նաեւ էթնիկ զտման ենթարկված եւ բռնի տեղահանված արցախահայության ու հետապնդման ենթարկվող Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավունքների պաշտպանությունը եւ հետեւողական պայքարն անհայտ կորածների խնդրի առաջմղման եւ նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության համար:

16.Իշխանափոխությունից հետո մեր առաջնահերթություններից են լինելու՝

- երկրի ներսում համերաշխության եւ պետական պատասխանատվության մթնոլորտի վերականգնումը,
- հակապետական, երկրի համար ծանր հետեւանքներ առաջացրած աններելի քայլերի իրավաքաղաքական գնահատականը եւ այդ քայլերի համար ողջ խստությամբ օրենքի կիրառումը:
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտունակության վերականգնումն ու արդիականացումը,
- բանակցային եւ դիվանագիտական երբեմնի ամուր դիրքերի վերականգնումն ու հետագա ամրապնդումը՝ ազգային, պետական շահերից ելնելով,
- արժանապատիվ եւ երաշխավորված խաղաղության հասնելը,
- արցախահայության արժանապատիվ եւ անվտանգ հավաքական վերադարձի իրավունքի, գերիների ազատ արձակման եւ անհայտ կորածների հարցերի հետեւողական առաջմղումը,
- իրական երաշխիքների ներքո ժողովրդավարական ազատությունների, քաղաքական մրցակցության եւ խոսքի ազատության վերականգնումը,
- Հայաստանի դիրքավորումը՝ որպես ինքնիշխան, անվտանգ, բարեկեցիկ, արժանապատիվ եւ ազգային շահը պաշտպանող պետության:

ՋԱՏՎԵԼ ԽԱՎԱՐԻՑ, ԸՆՏՐԵԼ ԼՈՒՅՍԸ»:

ՀՀԿ 18-րդ համագումար
04.04.2026, ք. Երեւան

ԱՎՍՏՐԱԼԻԱՆ ԱՊԱՀՈՎԵԼ Է

Ըստ Ավստրալիայի էներգետիկայի նախարար Քրիս Բոուենի՝ վառելիքի մատակարարումները ապահովված են առնվազն մինչեւ մայիս ամիսը: Նրա խոսքով՝ վառելիքի բոլոր գնումները արդեն կնքվել են պայմանագրերով, որոնք երաշխավորում են դրանց մատակարարումը ավստրալական ընկերություններին: «Պայմանագրի ստորագրումից հետո վառելիքը իրավաբանորեն պատկանում է գնորդին», - նշել է նա՝ ընդգծելով, որ սա մեծացնում է մատակարարման կայունությունը ներկայիս անկայուն միջազգային միջավայրում:Նախարարը հավելել է, որ Զատկի հանգստյան օրերին պակաս ունեցող բենզալցակայանների եւ դիզելային վառելիքի պակաս ունեցողների թիվը նվազել է:Մասնավորապես, վերջին տվյալների համաձայն՝ երկրում 274 կայաններ մնացել են առանց դիզելային վառելիքի, մինչդեռ նախկինում դրանց թիվը գերազանցել է 400-ը:

● *Ապրիլի 2-ից 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման 10 դեպք:*

ՍԱԿԱԳՆԵՐ

ՈՐՈՆՔ ԵՆ ԱՄԵՆԱՄԱՏՉԵԼԻՆ

ArmLur.am-ը ուսումնասիրել է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից իրականացվող մի շարք չվերթների ավիատոմսերի գները եւ պարզել, որ դրանք զգալի տատանվում են՝ կախված ուղղությունից, ամսաթվից եւ ավիաընկերությունից:

ArmLur.am-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ FlyOne Armenia ավիաընկերության դեպքում Երեւան-Սանկտ Պետերբուրգ չվերթների տոմսերի արժեքը ապրիլի 9-ից մինչեւ մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում տատանվում է 125-220 եվրոյի սահմաններում:

Նույն ժամանակահատվածում դեպի Մոսկվա չվերթների գները սկսվում են 115 եվրոյից եւ հասնում մինչեւ 290 եվրոյի, իսկ դեպի Եկատերինբուրգ՝ 96-160 եվրո:

Եվրոպական ուղղություններից դեպի Փարիզի «Շառլ դը Գոլ» օդանավակայան ավիատոմսերը հասանելի են 95-195 եվրո գնային միջակայքում: Մինչդեռ դեպի Իտալիայի մայրաքաղաք Հռոմ հնարավոր է մեկնել նույնիսկ 50-120 եվրոյով:

ArmLur.am-ը պարզել է նաեւ, որ ամառային սեզոնի համար որոշ ուղղություններով արդեն նկատվում է պահանջարկի աճ: Մասնավորապես՝ դեպի Ալբանիայի մայրաքաղաք Տիրանա չվերթները հունիս-հուլիս ամիսներին ունեն մոտ 265 եվրո միջին արժեք, իսկ դեպի Մոնտենեգրո ապրիլ-մայիս ամիսներին գները տատանվում են 78-164 եվրոյի սահմաններում:

Ջրսաշրջային ուղղություններից դեպի Եգիպտոս՝ Շարմ էլ-Շեյխ (SSH) եւ Հուրգադա, ավիատոմսերի միջին արժեքը կազմում է շուրջ 285 եվրո:

Միաժամանակ, ավելի մատչելի ուղղություններից է Կիպրոսի Լառնակա քաղաքը, որտեղ ապրիլ-մայիս ամիսներին հնարավոր է մեկնել 43-174 եվրոյով, իսկ դեպի Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի՝ 55-75 եվրոյով:

Իսրայելի մայրաքաղաք Թել Ավիվի դեպքում գները տատանվում են 91-175 եվրոյի սահմաններում:

Հեռավոր ուղղություններից դեպի Ղազախստանի Ալմաթի չվերթները նախատեսված են հունիս-հուլիս ամիսներին, եւ դրանց արժեքը կազմում է 169-196 եվրո:

Ուսումնասիրության շրջանակում դիտարկվել է նաեւ Wizz Air ավիաընկերության գնային քաղաքականությունը, որտեղ առավել էժան առաջարկներ են գրանցվել եվրոպական ուղղություններով: Մասնավորապես՝ դեպի Ռումինիայի Բուխարեստ ավիատոմսերի արժեքը սկսվում է ընդամենը 22 դոլարից, դեպի Չեխիայի մայրաքաղաք Պրահա՝ 28-ից մինչեւ 160 դոլար, իսկ դեպի Գերմանիա միջին արժեքը կազմում է մոտ 100 դոլար:

Իտալական ուղղություններով դեպի Հռոմ հնարավոր է մեկնել մոտ 90 դոլարով, իսկ դեպի Վենետիկ՝ 72 դոլարով:

ArmLur.am-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավիատոմսերի գները շարունակում են մնալ բարձր տատանողականության պայմաններում, եւ մասնագետները խորհուրդ են տալիս տոմսերը ձեռք բերել նախապես՝ խուսափելու սեզոնային թանկացումներից:

ՄՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

IDBANK

35 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՉԱՓՈՎ ԿՐԹԱՎՃԱՐ

IDBank-ը համագործակցության հուշագիր է ստորագրել Երեւանի պետական համալսարանի հետ: Բանկը իր «Կողք կողքի» սոցիալական պատասխանատվության նախաձեռնության շրջանակում կֆինանսավորի արցախցի 103 ուսանողի կրթավճարները, որը կազմում է ավելի քան 35 մլն դրամ:

Համագործակցության հուշագրի շրջանակում նախատեսվում է կրթաթոշակներ տրամադրել Մայր բուհի 103 արցախցի ուսանողների՝ նպաստելով նրանց կրթության առաջընթացին եւ սոցիալական կայունությանը:

IDBank-ի Վարչության նախագահ Մհեր Աբրահամյանի խոսքով Բանկի համար չափազանց կարեւոր է լինել հայրենակիցների կողքին: «Երեւանի պետական համալսարանի կողմից իրականացվել էր կարիքների գնահատում եւ արցախցի 103 ուսանող սոցիալական խնդիրների պատճառով հայտնվել էր ուսումն ընդհատելու վտանգի առջեւ: Կարեւորելով կրթությունը եւ դրա շարունակականությունը՝ IDBank-ը որոշում կայացրեց ԵՊՀ-ին փոխանցել բոլոր 103 ուսանողների կրթավճարները: Նման նախաձեռնությունների շնորհիվ մենք կարողանում ենք ոչ միայն նյութական աջակցություն տրամադրել, այլ նաեւ կայունության եւ վստահության զգացում փոխանցել երիտասարդներին՝ օգնելով նրանց կերտել իրենց ապագան Հայաստանում», - ասել է Մհեր Աբրահամյանը:

Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի խոսքով՝ ԵՊՀ-ն առաջին իսկ օրերից կանգնել է արցախցի ուսանողների կողքին՝ փորձելով հնարավոր բոլոր միջոցներով աջակցել նրանց թե՛ կրթությունը շարունակելու, թե՛ սոցիալական դժվարությունները հաղթահարելու ճանապարհին. «Մենք դիմել ենք մեր բարեկամներին, գործընկերներին եւ բոլոր այն կառույցներին, որոնք պատրաստակամ են եղել կիսելու այս պատասխանատվությունը եւ իրենց ներդրումն ունենալու մեր ուսանողների ապագայի կերտման գործում: Այսօր առանձնակի ուրախությամբ ենք արձանագրում, որ IDBank-ը միացել է այս կարեւոր նախաձեռնությանը՝ կատարելով իսկապես մեծ ու նշանակալի ներդրում: Մենք բարձր ենք գնահատում այս գործընկերությունն ու խորին շնորհակալություն հայտնում IDBank-ին՝ մեր ուսանողների նկատմամբ դրսեւորած վստահության, հոգատարության եւ կրթության շարունակականությունը կարեւորելու համար»:

Բացի ֆինանսական աջակցությունից՝ IDBank-ը իր ներդրումը կունենա նաեւ երիտասարդների ֆինանսական գրագիտության հարցում: Բանկի մասնագետները կայցելեն տարբեր ֆակուլտետներ եւ ֆինանսական կրթության դասընթացներ կանցկացնեն երիտասարդների համար: Նշենք, որ նման հանդիպումներ արդեն իսկ կայացել են ԵՊՀ-ի Տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների հետ:

IDBank-ի «Կողք Կողքի» ծրագիրն իրականացվում է 2024 թվականից: Ստորեւ ծրագրերից մի քանիսը՝

«Քո կողքին». IDBank-ի աջակցության նոր ծրագիրը՝ ուղղված բռնի տեղահանված արցախցիներին,

IDBank-ի ֆինանսավորմամբ Սվարանց գյուղը մանկապարտեզ կունենա. «Կողք կողքի» ծրագիրը շարունակվում է,

«Կողք կողքի». մեկնարկել է IDBank-ի՝ արցախցիներին ուղղված նոր ծրագիրը,

Կրթաթոշակ 100 արցախցի ուսանողի՝ IDBank-ի «Կողք կողքի» ծրագրի շրջանակում,

IDBank-ն ամփոփել է արցախցի դպրոցականների համար ֆինանսական կրթության ծրագրի արդյունքները

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Հոկտեմբերի 18-ից 30-ը Հայաստանը կհյուրընկալի ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը՝ COP17-ը: Միջոցառման շրջանակում առանցքային ուշադրություն է դարձվում անվտանգության բոլոր բաղադրիչներին: Արդեն իսկ նշանակվել են անվտանգության պատասխանատուներ եւ համակարգողներ:

«Միջոցառումն իր հնչեղությամբ եւ մեծածավալությամբ աննախադեպ է Հայաստանի Հանրապետության համար: Միջոցառման միջուկային անվտանգության ապահովման համակարգող է հանդիսանում Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրենը »,- նշել է ՆԳՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Արթուր Վարդանյանը:

Համաժողովին մասնակցելու են մի շարք պետությունների ղեկավարներ, բարձրաստիճան պաշտոնյաներ եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչը պահանջում է միջոցառման ճիշտ պլանավորում եւ բարձր մակարդակի պատրաստվածություն:

«Փրկարար ծառայության կողմից հրավերներ են ուղարկվել միջազգային փորձագետներին՝ Հայաստանի Հանրապետություն այցելելու, կարողությունների գնահատում իրականացնելու, փորձով կիսվելու եւ անհրաժեշտ տեխնիկական միջոցների հագեցվածության գնահատում իրականացնելու համար»,- նշել է ՆԳՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալը:

Շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ աշխատաժողովներ անցկացնելու նպատակով մարտի 30-ից Հայաստանում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության փորձագիտական խումբը: Կարիքների գնահատում իրականացնելու համար խումբն այցելելու է նաեւ համաժողովի անցկացման հիմնական վայրեր:

Աշխատաժողովների օրակարգում են միջուկային անվտանգության միջոցառումների պլանավորման, նախապատրաստման եւ ռիսկերի գնահատման հարցեր: Մասնակիցներին ներկայացվել են համապատասխան տեխնիկական միջոցների կիրառման առանձնահատկություններն ու մարդկային ռեսուրսների արդյունավետ ներգրավման մեխանիզմները. փորձագետները կիսվել են Մարոկկոյում, Սաուդյան Արաբիայում եւ Ֆրանսիայում խոշոր միջոցառումների ժամանակ կիրառվող անվտանգության ապահովման մոդելներով:

Նման ձեւաչափով հանդիպումների եւ միջազգային գործընկերների հետ համագործակցության շնորհիվ Հայաստանը շարունակում է ամրապնդել կարողությունները՝ ապահովելու COP17 համաժողովի անվտանգ եւ արդյունավետ անցկացումը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՏԵՔՍՏԻԼԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՄԵԿ ՎԱՅՐՈՒՄ

«Թելի իրադարձությունը. տեքստիլի համաշխարհային պատմություններ» միջազգային ցուցահանդեսը, որը բացվեց աprիլի 3-ին Հայաստանի ազգային պատկերասրահում, անդրադառնում է՝ ինչ կարող է մեզ պատմել տեքստիլն իշխանության, աշխատանքի, հիշողության եւ ինքնության մասին առանցքային հարցադրմանը:

Armenpress-ի թղթակցի հաղորդմամբ՝ Միջազգային մշակութային կապերի ինստիտուտի (Ifa - Institut fϕr Auslandsbeziehungen) եւ Հայաստանի ազգային պատկերասրահի համագործակցությամբ իրականացվող նախագիծը ներկայացնում է տեքստիլը ոչ միայն որպես դեկորատիվ կամ կենցաղային նյութ, այլեւ բարձրացնում է ավելի խորքային հարցեր. ո՞վ է այն պատրաստում, ի՞նչ պայմաններում եւ ու՞մ պատմություններն են դրանով արտացոլվում:

Պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանի խոսքով՝ ցուցահանդեսը տեքստիլը վերարժեւորելու եւ դրա հետ կապված կարծրատիպերը կոտրելու հնարավորություն է տալիս: Նա ընդգծեց, որ յուրահատուկ խորագրով ցուցադրությունը շրջիկ է. այն շրջագայությունը սկսել է Գերմանիայից, հետո ուղեւորվել է Քուվեյթ, Ստամբուլ, Բեռներ Շեւա, Լիմասոլ, Սալոնիկ, Թունիս, Պրիշտինա, Սկոպիե եւ Նովի Սադ, իսկ այժմ ցուցահանդեսը ժամանել է Երեւան՝ անդրազգային զրույցում նոր կապեր հյուսելու համար:

Հայաստանում Գերմանիայի փոխդեսպան Լարս Հեննիգը կարեւորեց հայկական թելի արդյունաբերությունը՝ արտահանումը, ներմուծումը, ինչպես նաեւ հայ դիզայներների աշխատանքները, որոնք ներկայացվում են տարբեր երկրներում եւ ապացուցում են հին ասացվածքն այն մասին, որ արվեստը սահմաններ չի ճանաչում:

Ըստ փոխդեսպանի՝ պատահական չէ, որ Գերմանիայի կառավարությունն ամեն կերպ փորձել է աջակցել հայկական թելի արտադրմանը, ոլորտի կայունացմանն ու ամրապնդմանը:

«Եթե ես ձեր առջեւ կանգնած լինեի մոտավորապես 2 հարյուր տարի առաջ, կկրեի մուգ կապույտ կոստյում, որը կունենար ձիգ օձիք, զարդարված կլինեի խոշոր ոսկեգույն զարդերով: Ֆրանսիացի գործընկերներս այդ հագուստի վրա սուր կավելացնեին, կաղնու ոսկեգույն տերեւներ: Դա ապացուցում է, որ թելի աշխարհը խորքային իմաստ եւ պատմություն ունի, իսկ մենք այսօր ավելի միատարր ենք հագնված եւ ընդգծում ենք մեր ստեղծարարությունն այլ տեսանկյունից: Թե՛ հայկական թելի արտադրությունը, թե՛ համաշխարհային թելի արտադրության ամբողջ պատմությունն այս ցուցադրությունն առավել արժեքավոր են դարձնում»,-շեշտեց Հեննիգը:

Ցուցահանդեսի աջակիցն է Հայաստանի «Գյոթե» ինստիտուտը, որի տնօրեն Յան-Թագե Քյուլինգն ընդգծեց, որ Գերմանիայի տարբեր ինստիտուտներից, տարբեր մշակութային կառույցներից հաճախ են հարցադիմումներ ստանում այն մասին, թե ինչպիսին է Հայաստանում թելի պատկերը մեր օրերում:

«Չեմ սխալվի, եթե նշեմ, որ թելի արվեստն այսօր ծաղկում է ապրում, եւ Հայաստանում թելի արտադրության ծաղկումը համահունչ է համաշխարհային միտումներին: Թելի եւ տեքստիլի արվեստը փոխկապակցված են եւ արտացոլում են որոշակի գեղագիտություն: Ցուցադրությանը տեսնում ենք ավանդականի եւ ժամանակակիցի ներդաշնակությունը: Կարեւոր է, որ տեքստիլը նաեւ միավորում է թանգարաններն ու մեր առօրյա կյանքը»,-նշեց Յան-Թագե Քյուլինգը՝ ցուցադրության առթիվ շնորհավորելով բոլորին:

Ցուցահանդեսին Ifa-ի հավաքածուի 13 ժամանակակից միջազգային նկարիչների աշխատանքները ներկայացված են Հայաստանից եւ սփյուռքից 16 նկարիչների հետ երկխոսությամբ:

Ստեղծագործելով ինստալացիայի,պերֆորմանսի, վիդեոարտի, նկարչության, քանդակագործության եւ այլ արվեստի բնագավառներում՝ մասնակից արվեստագետները խնդրականացնում են տեքստիլի առկա պատկերացումները՝ որպես ապաքաղաքական, անանուն կամ բացառապես «կանացի» ոլորտ, փոխարենը բացահայտելով այն իբրեւ դիմադրության, գիտելիքների արտադրության եւ հավաքական հիշողության տիրույթ:

Ցուցահանդեսի համադրողներն են Վիգեն Գալստյանը (ՀԱՊ), Ասյա Յաղմուրյանը, Ինկա Գրեսսելը (Բեռլին), Սուսան Վայսը (Ifa): Ցուցահանդեսն ուղեկցվում է հանրային զրույցների ծրագրով եւ հրատարակությամբ:

«Թելի իրադարձությունը. տեքստիլի համաշխարհային պատումները» ifa-ի (Institut fϕr Auslandsbeziehungen) նախագիծն է, որը ներկայացվում է Հայաստանի ազգային պատկերասրահի հետ համագործակցությամբ եւ Սերգեյ Փարաջանովի թանգարանի, Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի, Հայաստանի կինոյի հիմնադրամի եւ Aha Collective-ի մասնակցությամբ:

ՄԱՐՔԱԿԱՆ

ԱՊԱՔԻՆՎԵԼ Է

«Ինտեր»-ն Իտալիայի առաջնությունում վերջապես կարողացել է ընդհատել 3 հանդիպում առանց հաղթանակների ձգվող շարքը: Վնասվածքից ապաքինված Հենրիխ Մխիթարյանի վերադարձը թիմը նշանավորել է «Ռոմա»-ի նկատմամբ 5:2 հաշվով տարած հաղթանակով:

Դուբլի հեղինակ է դարձել ավագ Լաուտարո Մարտինեսը, մեկական անգամ էլ աչքի են ընկել Հաքան Չալհանօղլուն, Մարկուս Թյուրամն ու Նիկոլո Բարելլան: «Ռոմա»-ից գոլերով են պատասխանել Ջանլուկա Մանչինին ու Լորենցո Պելեգրինին:

Մխիթարյանը պահեստայինների նստարանին է սկսել հանդիպումն ու փոխարինման է դուրս եկել 76-րդ րոպեին:

«Ինտեր»-ը վաստակել է 72 միավոր եւ Ա Սերիայի միանձնյա առաջատարն է: Ապրիլի12-ին թիմը մրցելու է «Կոմո»-ի հետ:

ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Էդուարդ Սպերցյանը վերադարձել է Կրասնոդար ու մասնակցել «Ախմատ»-ի դեմ հանդիպմանը: Ավելի վաղ Հայաստանի հավաքականի ընկերական հանդիպումը Բելառուսի դեմ նա բաց էր թողել վնասվածքի պատճառով: Թիմի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը նշել էր, որ նա կկարողանա ելույթ ունենալ մոտ երկու շաբաթ անց: Սակայն Սպերցյանն արդեն իրեն լավ է զգում ու նպաստել է իր թիմի հաղթանակին՝ 1:0: «Գրոզնիում դժվար ու շատ կարեւոր հաղթանակ տոնեցինք: Շնորհակալ եմ բոլորին աջակցության համար: Իսկ մենք արդեն պատրաստվում ենք մոսկովյան թիմի դեմ խաղին»,- հաղթանակից հետո իր տելեգրամյան ալիքում գրել է Սպերցյանը: Ապրիլի 8-ին «Կրասնոդար»-ը Ռուսաստանի գավաթում հանդիպելու է Մոսկվայի «Դինամո»-ին:

ՉԵՂԱՐԿՎԵԼ Է

Ապրիլի 8-ին Սան Պաուլու քաղաքում HYPE FC մրցաշարի շրջանակներում գրեփլինգի կանոններով նախատեսված Արման Ծառուկյանի ու հայկական արմատներով Դիլոն Դենիսի միջեւ մենամարտը չի կայանալու:

Կազմակերպիչները չեն մանրամասնել չեղարկման պատճառները: Մարզիկները երեկոյի գլխավոր մենամարտում պետք է պայքարեին լիգայի չեմպիոնական գոտու համար: Ապրիլի 19-ին Ծառուկյանը Ֆիլադելֆիայում RAF 08 մրցաշարում ըմբշամարտի կանոններով մրցելու է 46-ամյա Յուրայ Ֆեյբերի հետ: «Քանի՞ միավորով ենք ցանկանում, որ շրջանցեմ այդ կարտոֆիլի պարկին: Հենց հիմա պատվերներ արեք», - սոցկայքերում գրել է Ծառուկյանը:

ԼՈՒՐԵՐ

ԱՄՓՈՓՎԵԼ Է ՓԱՌԱՏՈՆԸ

Լեհական երաժշտությանը նվիրված հատուկ համերգով եզրափակվել է Ժամանակակից երաժշտության փառատոնը: Համերգն անցկացվել է Հայաստանում Լեհաստանի դեսպանության հետ համագործակցությամբ:

Armenpress-ի հաղորդմամբ՝ համերգին ելույթ է ունեցել Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի երաժիշտներից կազմված «Միրզոյան» լարային քառյակը՝ Տիգրան Մաթեւոսյան (1-ին ջութակ), Իվանե Եսայան (2-րդ ջութակ), Արմեն Թորոսյան (ալտ), Հայկ Բաբայան (թավջութակ) կազմով:

Հնչել են Գրաժինա Բացեւիչի թիվ 3 լարային կվարտետը, Քշիշտոֆ Պենդերեցկու Կլարնետ կվարտետը (կլարնետահար՝ Ավետիք Ղազարյան), Վիտոլդ Լուտոսլավսկու ջութակի եւ դաշնամուրի համար «Ռեչիտատիվը է արիոզո» ստեղծագործությունը (Իվանե Եսայան՝ ջութակ եւ Անահիտ Դիլբարյան՝ դաշնամուր), Կարոլ Շիմանովսկու թիվ 1 լարային կվարտետը:

Այս տարի Ժամանակակից երաժշտության փառատոնի շրջանակում կայացել է 7 համերգ՝ սիմֆոնիկ եւ կամերային: Հնչել են համաշխարհային եւ հայաստանյան բազմաթիվ պրեմիերաներ:

Փառատոնը հիմնադրվել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի կողմից՝ հայ դասական եւ արդի կոմպոզիտորական արվեստը հայ ունկնդրին ներկայացնելու առաքելությամբ: Փառատոնի նպատակն է հանրահռչակել հայ կոմպոզիտորական արվեստը, ինչպես նաեւ հայ եւ արտասահմանյան ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Փառատոնն անցկացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ եւ Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ: Փառատոնի ռազմավարական գործընկերն է GTB Holdings ընկերությունը:

Հայաստանում Լեհաստանի դեսպանության եւ Հայաստանի ֆոնդային բորսա եւ Կենտրոնական դեպոզիտարիայի (AMX) շնորհիվ նվագախումբը հասանելիություն է ստանում լեհ կոմպոզիտորների ստեղծագործությունների պարտիտուրներին:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ»

Քաղաքացու օրը՝ ապրիլի 25-ին, Ժամը 20:00-ին Երեւանի Հանրապետության հրապարակում տեղի կունենա «Խաղաղության ձայնը» երաժշտական փառատոնը: Armenpress-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում է Voice of peace «Ինստագրամ»-ի էջը: Նշվում է, որ այդ օրը լինելու է երաժշտությամբ եւ էներգիայով լի բացառիկ երեկո, որտեղ մեկ բեմում կհանդիպեն համաշխարհային աստղեր եւ ոչ միայն: Բեմում կլինեն Իվետա Մուկուչյանը, Outlandish-ը, In-Grid-ը, Willy William-ը:

Մուտքն ազատ է:

● *Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում ապրիլի 10-ին՝ ժամը 17:00-ին, կկայանա «Հայկն ու դասագիրքը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Էլիտար շենքի բնակիչները կայանատեղիի արգելափակոցը բացելու համար ազդանշաններ են տալիս ու խանգարում անդորրս: Ո՞ւմ դիմեմ հարցը կարգավորելու համար:

Հեղինե Սիմոնյան, 57 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ճանապարհային երթևեկության կանոնների 136 կետի՝ ձայնային ազդանշանները կարող են կիրառվել միայն.

1) բնակավայրերից դուրս վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար,

2) այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:

Բացի վերոնշյալ երկու դեպքերից, տրանսպորտային միջոցների վարորդներն իրավունք չունեն այլ իրավիճակներում կամ այլ նպատակների համար տան ձայնային ազդանշան: Իսկ նման գործողությունների կատարումը կհանգեցի ՃԵԿ կանոնների խախտման, հետեւաբար՝ նաեւ վարչական պատասխանատվության: Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ձայնային ազդանշանի կիրառման կանոնները խախտելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ 5000 ՀՀ դրամի չափով: Այս մասին քաղաքացիները պետք է ահազանգեն Ճանապարհային ոստիկանություն 1-70 հեռախոսահամարով՝ հայտնելով, թե որ տրասնպորտային միջոցի կողմից, երբ եւ որտեղ է տրվել կամ տրվում անհարկի ձայնային ազդանշան, որից հետո նշված հասցե կգան ՃՈ աշխատակիցները եւ, իրավախախտին բացահայտելու դեպքում, նրան կենթարկեն վարչական պատասխանատվության:

Նման իրավիճակում կա մեկ այլ սահմանափակում, մասնավորապես՝ եթե վարորդները ձայնային ազդանշանները տալիս են գիշերային ժամերին՝23:00-ից հետո մինչեւ 07:00, եւ դա հանգեցնում է քաղաքացիների անդորրի խանգարման: Նման գործողությունների համար եւս սահմանված է վարչական պատասխանատվություն: Մասնավորապես, գիշերային ժամանակ (ժամը 23:00-ից մինչեւ 7:00-ն, բացառությամբ այն դեպքերի, երբ լռությունը խախտվում է հասարակական օբյեկտների աշխատողների կողմից) լռությունը խախտելը, այսինքն՝ բարձրաձայն երգելը կամ երաժշտական գործիքներ նվագելը, կամ ձայնային ազդանշաններ տալը, կամ բարձր միացրած հեռուստացույցից, ռադիոընդունիչից, մագնիտոֆոնից կամ այլ սարքերից օգտվելը բնակելի շենքերի բնակարաններում կամ մուտքերում, կամ բնակելի տարածություններում, կամ բակերում, կամ փողոցներում, կամ այլ հասարակական վայրերում, կամ դրանցից դուրս աղմուկով ուղեկցվող աշխատանքներ կատարելը, որոնք կապված չեն անհետաձգելի անհրաժեշտության հետ, ինչպես նաեւ այլ գործողությունները, որոնք խախտում են գիշերային անդորրը, առաջացնում են նախազգուշացում: Նախազգուշացման կիրառումից հետո նույն անձի կողմից գիշերային անդորրը մեկ տարվա ընթացքում կրկին խախտելու դեպքում տվյալ անձը ենթակա է վարչական պատասխանատվության՝ 40,000 դրամի չափով: *(Շարունակությունը՝հաջորդ համարում)*

ՀՀ ոստիկանություն

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Բուհում ֆինությունս անարդարացիորեն անբավարար են գնահատել: Ի՞նչ կարող եմ անել:

Մնահիտ Ղազարյան, 20 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողը բարձրագույն (հետբուհական) կրթության սուբյեկտ է, որն ունի մի շարք իրավունքներ եւ պարտականություններ: Այդ իրավունքների թվին է դասվում սովորողի՝բողոքարկման իրավունքը: Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողն իրավունք ունի բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության կայացրած որոշումները, հրամաններն ու կարգադրությունները: Բողոքարկումը կատարվում է գրավոր ձեւով՝բողոքը հասցեագրելով բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորին: Բողոքն իր մեջ պետք է պարունակի Ձեր բոլոր առարկություններն ու դիտարկումները՝ կապված ավարտական քննության ժամանակ Ձեր պատասխանի հետ:

Մինչ բողոքարկելը, անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ավարտական քննության ընթացքը ձայնագրվում էր, թե ոչ: Եթե այն ձայնագրվում էր, ապա Դուք իրավունք ունեք դիմել եւ ստանալ ավարտական քննության Ձեր պատասխանի ձայնագրությունը եւ ուսումնասիրել, թե որքանով է համապատասխանում տրված գնահատականը Ձեր պատասխանին: Բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորը, ստանալով Ձեր գրավոր բողոքը, պարտավոր է դրա հիման վրա պետական քննությունն ընդունող հանձնաժողովում քննել այն եւ դրա վերաբերյալ կայացնել համապատասխան որոշում՝ բավարարելով կամ մերժելով այն: Բավարարվելու դեպքում ռեկտորը հանձնաժողովի համաձայնությամբ իրավունք ունի փոփոխելու կայացված որոշումը կամ նշանակելու նոր քննության օր: Իսկ Ձեր բողոքը մերժվելու դեպքում այն կարող եք բողոքարկել ինչպես ըստ վերադասության, այնպես էլ՝դատարան:

ԿԳՄՍ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ըստ վերադասության բողոքարկելու դեպքում Ձեր գրավոր բողոքը պետք է ուղղեք ՀՀ կրթության եւ գիտության նախարարին՝ խնդրելով հարուցել վարչական վարույթ եւ վերանայել կայացված որոշումը: Բողոքի քննության վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով կարող եք զանգահարել ՀՀ կրթության եւ գիտության նախարարության թեժ գիծ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝shamshyan.com-ի

Ողբերգական ավտովթար Արագածոտնի մարզում. բախվել են «Kia Forte»-ն եւ «ՎԱԶ 2107»-ը: Վերջինի 21-ամյա վարորդը հիվանդանոցում մահացել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 1 - 4 + 7 + 11
	Կոտայքի լեռներ	0 - 3 + 7 + 11
	Կոտայքի նախալեռներ	+ 1 + 3 +12 + 14
	Գեղարքունիք	- 1 - 4 + 7 + 11
	Լոռի	+ 1 + 5 + 10 + 13
	Տավուշ	+ 1 + 4 + 10 +14
	Արագածոտնի լեռներ	- 2 - 4 + 6 + 10
	Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 4 +11 + 16

	Արարատ	+ 2 + 5 +15 + 17
	Արմավիր	+ 3 + 6 +15 + 17
	Վայոց ձորի լեռներ	- 1 - 4 + 6 + 10
	Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 6 +15 + 18
	Սյունիքի լեռներ	- 1 - 4 + 4 + 7
	Սյունիքի նախալեռներ	0 + 4 +10 + 14
	Սյունիքի հովիտներ	+ 5 + 9 +18 + 22
	Երեւան	+ 3 + 5 +15 +17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **06.04.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*